Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
սեպտեմբերի 4-ի N 918 - Ա որոշման

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի խորհրդանիշի տարրերն են՝ երկու արծիվները, վահանը (երկու խաչաձևված աչքերի տեսքով), կնգումի (հայկական կզաքիսի) մորթին և կաղնու տերևները:

2. Խորհրդանիշի ոսկեգույնով երիզված շրջանակաձև կենտրոնում երկու արծիվները պահում են խաչված աչքերի գծապատկերով ոսկեգույնով երիզված վահանը՝ պատված կնգումի (հայկական կզաքիսի) սպիտակ մորթիով:

3. Հաջորդ՝ արտաքին շրջանակաձև շերտում ոսկեգույն հայերեն տառերով գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ»:

4. Ընդհանուր շրջանը երիզում է Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը:

5. Շրջանի ընհանուր ետնապատկերը (ֆոնը) մուգ կապույտ է:

6. Արծիվները ոսկեգույն են և խորհրդանշում են ուժ, սլացք, զգոնություն, կամք և սրատեսություն:

7. Կնգումի (հայկական կզաքիսի) սպիտակ մորթին ընդգծված է սև գույնի պոչիկների պատկերներով: Այն խորհրդանշում է արդարություն (արդարադատություն), անաղարտություն և ողջախոհություն՝ վկայելով կրողի բարոյականության, վեհության և անբասիրության մասին:

8. Խաչված աչքերի գծապատկերով ոսկեգույնով երիզված վահանը խորհրդանշում է ուշադրություն, ուշիմություն, անձի, հասարակության և պետության պաշտպանության ապահովում հանցագործություններից:

9. Սուրը ոսկեգույն է և խորհրդանշում է անկախություն, արդարություն և պայքար: Այն ուղղահայաց դիրքով գտնվում է վահանի հետնամասում: Վահանից դուրս՝ վերևի մասում երևում է սրի խաչաձև բռնակը, իսկ ներքևից դուրս է գալիս սրի շեղբը:

10. Միմյանց փոխկապակցված կաղնու երկու ոսկեգույն տերևները խորհրդանշում են անհողդողդ ուժ, տոկունություն, երկարակեցություն և վեհություն:

11. Ոսկեգույնը խորհրդանշում է իմաստություն, արժանապատվություն, իշխանություն:

12. Մուգ կապույտը խորհրդանշում է զսպվածություն, ճշմարտություն, վճռակա-նություն:

13. Խորհրդանիշի պատկերն ունի շրջանաձև տեսք: Շրջանը հավերժության և անսահմանության խորհրդանիշն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ